ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«14» «Հոկտեմբեր» 2022 թ. № 77-Հ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի N 449-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի նոյեմբերի 24-ի «Շրջակա միջավայրի նախարարության գործավարության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2017 թվականի հուլիսի 13-ի N225-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 449-Ա հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Կարգի կետ 71-ը շարադրել նոր խմբագրությամբ.

«71. Համաձայնեցման ներկայացված հրամանի նախագծի ուսումնասիրման համար ստորաբաժանմանը/Կազմակերպությանը տրվում է առավելագույնը 6 աշխատանքային ժամ, իսկ մեկօրյա կամ «Շատ շտապ» հրամանների դեպքերում՝ 2 ժամ: Սահմանված ժամկետում դիրքորոշում չներկայացնելու դեպքում, այն համարվում է դրական, համաձայնեցման ներկայացրած ստորաբաժանման/Կազմակերպության ղեկավարն առանց տվյալ ստորաբաժանման/Կազմակերպության կարծիքի հրամանի նախագիծը ներկայացնում է հաստատման, համակարգի պատուհանում նշելով, թե որ ստորաբաժանման/Կազմակերպության ղեկավարը սահմանված ժամկետում չի ներկայացրել համապատասխան դիրքորոշում:

Հրամանների նախագծերը, բացառությամբ հրատապներից, տվյալ օրվա ժամը 17:30-ից հետո համաձայնեցման չի ուղարկվում:

Գլխավոր քարտուղարի պահանջի դեպքում դիրքորոշում չներկայացրած ստորաբաժանման ղեկավարը պարտավոր է 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել բացատրություն:»,

2. Կարգի 90-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«90. Համաձայնեցման ներկայացված ելից գրության ուսումնասիրման համար ստորաբաժանմանը/Կազմակերպությանը տրվում է առավելագույնը 6 աշխատանքային ժամ, իսկ մեկօրյա կամ «Շատ շտապ» գրությունների դեպքերում՝ 2 ժամ: Սահմանված ժամկետում դիրքորոշում չներկայացնելու դեպքում, այն համարվում է դրական, համաձայնեցման ներկայացրած ստորաբաժանման/Կազմակերպության ղեկավարն առանց տվյալ ստորաբաժանման/Կազմակերպության կարծիքի գրության նախագիծը ներկայացնում է հաստատման, համակարգի պատուհանում նշելով, թե որ ստորաբաժանման/Կազմակերպության ղեկավարը սահմանված ժամկետում չի ներկայացրել համապատասխան դիրքորոշում:

Գրությունների նախագծերը, բացառությամբ հրատապներից և մեկ օրյա ժամկետ ունեցող գրությունների, տվյալ օրվա ժամը 17:30-ից հետո համաձայնեցման չի ուղարկվում:

Գլխավոր քարտուղարի պահանջի դեպքում դիրքորոշում չներկայացրած ստորաբաժանման ղեկավարը պարտավոր է 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել բացատրություն»:

3/14/2022

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

Հ.ՍԻՄԻԴՅԱՆ

«14» Մարտ 2022թ.
ք. Երևան